

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԻ

**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Բոստանջյան Վարդան Բաբկենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Օպնեցյան Հրաչյա Սերգեյի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կիրակոսյան Գևորգ Ֆերդինանտի

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային ագրարային
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հուլիսի 16-ին, ժամը 13³⁰-ին
Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության
թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ.-ի հունիսի 14-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տնտեսական հարաբերությունների ազատականացման պայմաններում հասարակական ֆինանսների արդյունավետ կառավարումը դառնում է զարգացման կարևորագույն խնդիր: Այն հիմնարար նշանակություն է ստանում ինչպես բյուջետային համակարգի կայունության, այնպես էլ տնտեսական աճի ապահովման գործում: Ակնհայտորեն, տվյալ խնդրի լուծման գործում առանցքային դեր է վերապահված բյուջետային գործընթացի կատարելագործմանը, որը, ըստ էության, պետք է հիմնված լինի հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկության, պետական ֆինանսական համակարգի կայունության, միջբյուջետային հարաբերությունների գործում մեխանիզմի առկայության, բյուջետային գործընթացի կանոնակարգվածության, ինչպես նաև արդյունավետ ֆինանսական վերահսկողության, հաշվետվողականության և մոնիտորինգի իրականացման սկզբունքների վրա:

Նշված սկզբունքները անհրաժեշտ է քննարկել հասարակական ֆինանսների կառավարման միասնական համակարգի շրջանակներում, որն ակնհայտորեն պետք է կողմնորոշված լինի քաղաքական և տնտեսական նոր իրողություններին համապատասխանեցմանը և շարունակական զարգացմանը: Այլ խոսքով՝ բյուջետային համակարգում բարեփոխումների իրականացման արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ դեպքերում պետական ծախսերի հիմնավորվածությունը, ինչպես նաև սոցիալական արդյունավետությունը հեռու է բավարար լինելուց: Այն ցուցանիշները, որոնք դրված են պետական ծախսային քաղաքականության գնահատման հիմքում, ոչ միայն մեթոդապես հնացած են, այլև թույլ չեն տալիս լիարժեք գաղափար կազմել բյուջետային ծախսերի իրական արդյունքների մասին, դրանց հիման վրա ընդունել որակյալ ռազմավարական որոշումներ: Նեգատիվ այս երևույթները բացառելու նպատակով պետական ծախսային քաղաքականության արդյունավետության գնահատման գոյություն ունեցող մոտեցումների փոխարեն Հայաստանի Հանրապետությունում պետք է ներդնել և զարգացնել «ծրագրային բյուջետավորման» մեթոդը, որը դեռևս բյուջեի նախագծի ձևավորման ընթացքում թույլ կտա համակողմանիորեն հիմնավորել, թե պետական ծախսերին հավակնող այս կամ հայտի բավարարման ու բյուջե ներառման դեպքում ինչպիսին կլինեն ակնկալվելիք արդյունքները: Ատանախոսության շրջանակներում դիտարկվել են ծրագրային բյուջետավորմանն առնչվող խնդիրները և մշակվել են դրանց լուծմանն ուղղված մոտեցումներ: Այս հանգամանքով էլ պայմանավորված է ատանախոսության թեմայի արդիականությունը և կատարման անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրների լուծմանը, պետական ֆինանսական համակարգի կատարելագործմանը և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմների և մեթոդական մոտեցումների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- գնահատել բյուջետային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում և դիտարկել Հայաստանի Հանրապետությունում ծախսային քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը,
- ուսումնասիրել ծրագրային բյուջետավորման միջազգային փորձը և բացահայտել հանրապետությունում դրա օգտագործման առանձնահատկությունները,
- բացահայտել ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և զարգացման նախադրյալները հանրապետությունում,
- վերլուծել բյուջետային ծախսերի պլանավորման սկզբունքները և հանրապետությունում դրանց գործնական կիրառության հնարավորությունները,
- գնահատել ծրագրային բյուջետավորման ներդրման և բյուջետային ծախսերի կառավարման մոտեցումները,
- բացահայտել Հայաստանում բյուջետային քաղաքականության բարելավման ուղիները,
- մշակել պետական արդյունավետ ֆինանսական քաղաքականություն երաշխավորող ծրագրային բյուջետավորման մոդել և ներկայացնել հանրապետությունում դրա ներդրմանն ուղղված առաջարկություններ,
- մշակել Հայաստանի բյուջետային համակարգում բարեփոխումների իրականացման մոտեցումներ և առաջարկել հանրապետությունում ծախսային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետություն բյուջետային գործընթացն է տնտեսական բարեփոխումների արդի փուլում, իսկ առարկան՝ ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրների բացահայտումը՝ այդ համակարգի ներդրման և պետական ծախսային քաղաքականության վերանայման ու գնահատման համատեքստում:

Հետազոտության տեսանկյունային և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար հիմք է հանդիսացել բյուջետային գործընթացը կարգավորող և պետական ծախսային քաղաքականությունը մշակող և դրա հետ կապված հարաբերություններին վերաբերող հայրենական և արտասահմանյան, անցումային տնտեսությունների առանձնահատկությունները ուսումնասիրող հեղինակների աշխատությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ օրենքներն ու այլ իրավական ակտերը, ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև այլ կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, տնտեսամաթեմատիկական մեթոդները, ինչպես նաև համեմատական վերլուծության սկզբունքները:

Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները: Հետազոտության արդյունքներն հիմնականում ունեն գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից համակողմանի վերլուծության են ենթարկվել ծրագրային

բյուջետավորման մոտեցումները, բյուջետային քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են դրանց առավելությունները և ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում այդ մոտեցումների կիրառության հնարավորությունները,

- բյուջետային գործընթացի վրա ազդող մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների՝ հարկային բեռի, պետական պարտքի, պետական ծախսերի քանակական և որակական վերլուծության հիման վրա տարբեր սերունդների բարեփոխումների համատեքստում առաջարկվել է բյուջետային համակարգում բարեփոխումների տնտեսական գնահատման և ծրագրային բյուջետավորման սկզբունքների իրացման ճանապարհով դրա գործնական կիրառության մեխանիզմ,
- մշակվել է մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների միջև կոռելյացիոն կախվածությունները և ժամանակային շարքերն արտացոլող էկոնոմետրիկ մոդել, ուղղված Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ներդրմանը, այդպիսով՝ բյուջետային գործընթացի կատարելագործմանը և ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրների պետական կարգավորման և այդ համակարգի ամրապնդման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական և գործնական նշանակություն ունեն և կիրառության դեպքում կարող են իրական հիմք հանդիսանալ պետական ծախսային քաղաքականության վերանայման, ծրագրանպատակային բյուջետավորման ներդրման և դրա տնտեսական ու սոցիալական արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման, կատարելագործման ու իրականացման ուղղությամբ, ինչպես նաև օգտակար լինել ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող տնտեսագետ-գիտնականների, ասպիրանտների և ուսանողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Հետազոտության մի շարք արդյունքներ ներդրվել են և ստացել են գործնական կիրառություն:

Ատենախոսության թեմայով հրապարակված են 4 գիտական հոդվածներ:

Հետազոտության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 130 էջ, ներառյալ՝ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «Ծրագրային բյուջետավորման արտերկրյա փորձը և ՀՀ-ում այդ համակարգի ձևավորման առանձնահատկությունները», *գլխում* ուսումնասիրվել են բյուջետային համակարգի՝ որպես տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակի, ինչպես նաև ծախսերի արդյունավետության ապահովման գործում ծրագրային բյուջետավորման դերին առնչվող հարցերը:

Տնտեսագետ մասնագետների կողմից բյուջեն դիտվում է որպես կարևոր տնտեսական հասկացություն, քաղաքական ենթակառուցվածք, ֆինանսական համակարգի կենտրոնական օղակ և տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակ¹: Հասարակության զարգացմանը զուգընթաց, փոխվում է նաև բյուջեի սոցիալ-տնտեսական դերը: Վարչահրամայական տնտեսության պայմաններում պետական բյուջեն հանդիսանում է հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերի ֆինանսական ապահովվածության միակ աղբյուրը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետությունը կարող է միայն որոշակիորեն միջամտել երկրի տնտեսական և սոցիալական կյանքին, հասարակական վերարտադրության և ազգային եկամտի վերաբաշխման գործընթացներին:

Պետական բյուջեն իշխանությանը հնարավորություն է տալիս իր իսկ կողմից հռչակված ռազմավարությանը համապատասխան բյուջետային միջոցներն օգտագործել գերակա ուղղություններով, դրանով իսկ երկրում իրականացնելով միասնական բյուջետային քաղաքականություն: Իսկ պետական ծախսերի արդյունավետ կառավարումը բոլոր ժամանակներում էլ հանդիսացել է պետության կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ անկախ տնտեսության զարգացման աստիճանից և բյուջետային մուտքերի ծավալից: Որպես կանոն, բյուջետային ծախսերի իրականացումը պայմանավորված է պետության և բյուջեի առջև ծառայած խնդիրներով: Դրանք առավել սուր բնույթ են ստանում տնտեսավարման նոր պայմաններին անցման փուլում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանափակ բյուջետային ռեսուրսներով անհրաժեշտ է ապահովել առավել կարևոր ու լայն շրջանակի խնդիրների լուծումը:

Տարբեր երկրներում պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ և դրա դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակներին այն դրսևորել է շարունակական աճի միտում²: Այսպես, ԱՄՆ-ում դաշնային և նահանգների բյուջեների համախառն ծախսերի ծավալը

¹ Финансы. Учебник. Под ред. В. Ковалева. –М.: 2004, стр. 185.

² Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Սաֆարյան Ա. «Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», -Եր., 2004, էջ 21:

1929 թվականին կազմել է ՀՆԱ-ի 10%-ը, 1950 թվականին՝ 50%-ը, 1992 թվականին՝ 38.7%, 1996-1998 թվականին՝ 33%: Արևմտավրոպական երկրների մեծ մասում ՀՆԱ-ի նկատմամբ պետական ծախսերի ցուցանիշը 20-րդ դարի 20-ական թվականների 15.4%-ից աճել է և 90-ականներին արդեն կազմում էր 50% (Շվեդիայում և Նորվեգիայում այդ ցուցանիշը կազմել է 60%): Առավել ուշագրավ է նշված ցուցանիշի համեմատականը անցումային երկրների կտրվածքով: Եթե Լեհաստանում, Հունգարիայում, Սլովենիայում պետական ծախսերը կազմել են 45-50%, ապա Բուլղարիայում և Ռումինիայում, որոնցում առավել մեծ են եղել արտադրության անկման տեմպերը, այդ ցուցանիշը կազմել է 25-35% (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

1880-2000թթ. պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում արտերկրում³

Երկիր	Պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում, %						
	1880թ.	1929թ.	1960թ.	1970թ.	1980թ.	1990թ.	2000թ.
ԱՄՆ	8.0	10.0	27.8	32.2	31.4	32.8	33.1
Ճապոնիա	11.0	19.0	18.3	19.3	32.0	31.3	35.5
Անգլիա	10.0	24.0	32.6	39.3	43.0	39.9	39.7
Գերմանիա	10.0	31.0	32.0	37.6	47.9	45.1	47.4
Ֆրանսիա	15.0	19.0	34.6	38.9	46.1	49.8	53.2
Շվեդիա	6.0	8.0	31.1	43.8	60.1	59.1	60.1

Տնտեսական անկման պայմաններում, երբ սահմանափակ են բյուջետային եկամուտների ավելացման հնարավորությունները, ծախսային ոչ նպատակամետ քաղաքականությունը կարող է հանգեցնել երկրում մակրոտնտեսական իրավիճակի վատթարացմանը: Անցումային երկրների փորձը ցույց է տալիս, որ բյուջետային ծախսերի ոլորտում պետական ծրագրի մշակումն ու իրականացումը հանդիսանում են հրատապ խնդիրներից մեկը: Այդ խնդրի լուծման համար կան մի շարք մոտեցումներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առավելություններն ու թերությունները և կիրառվում է ելնելով տվյալ երկրի զարգացման աստիճանից և գոյություն ունեցող առանձնահատկություններից:

Բյուջեների մշակման առավել հին և լայն տարածում ստացած մոտեցումներից է ըստ հողվածների բյուջետավորումը, որի կիրառումը պայմանավորված է այդ տարբերակի պարզությամբ, հաշվետվողականությամբ և վերահսկողությամբ:

Ներկայումս առանձնացվում են, ըստ արդյունքների բյուջետավորման երկու հիմնական մոդելներ, որոնց տարբերությունը կայանում է արդյունքների որոշման մեջ (աղյուսակ 1-ում):

Բյուջետավորման մոդելներից հաջորդը ծրագրային բյուջետավորումն է, որն ավելի շատ, քան մյուս մոդելները, հարմար է կենտրոնացված պլանավորման համար: Այս մոդելի կիրառման դեպքում հիմնական

³ Приоритеты бюджетной политики и формирование концепции федерального бюджета н 2001 год. Аналитический доклад Совета Федерации. 2000 г. стр. 52.

շեշտադրումը կատարվում է այլընտրանքային ծրագրերի տնտեսական վերլուծության և բյուջետային ծախսերի տնտեսական հետևանքների գնահատման վրա⁴:

Տեսականորեն զրոյական հիմքով բյուջեի մշակման համակարգը հիմնվում է այն թեզի վրա, որ յուրաքանչյուր ֆինանսավորվող ծրագիր, ինչպես և յուրաքանչյուր նոր ծրագրային առաջարկ պետք է վերլուծության ենթարկվի առանց ֆինանսավորման նախկին մակարդակները հաշվի առնելու: Այդ մեթոդի, որը ստացել է «զրոյական բյուջետավորում» անվանումը, հիմնական առավելությունները կայանում են բյուջետային հիմնարկներից տեղեկատվության առավել մեծ ծավալի տրամադրման պահանջների մեջ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Արդյունքների հիման վրա բյուջետավորման մոդելներ և դրանց առավելություններն ու թերությունները⁵

<i>Ամմիջական արդյունքներին կողմնորոշված բյուջետավորում</i>	<i>Վերջնական արդյունքներին կողմնորոշված բյուջետավորում</i>
Արդյունքների տեսակը	
Ծառայությունների ծավալ, ծառայություններից օգտվող բնակչության թիվ, միջոցառումների քանակ:	Հասարակական բարիքների ծավալ, պետական ծառայությունների մատուցումից առաջացող սոցիալ-տնտեսական արդյունքներ:
Առավելություններ	
Ծառայությունների արժեքի հաշվարկման և ծախսերի ծավալի որոշման պարզություն, Արդյունքի համար պատասխանատու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման հնարավորություն:	Կողմնորոշված է քաղաքական նպատակների ձեռք բերմանը, ծառայությունների ծավալը որոշվում է հասարակության պահանջմունքներից ելնելով:
Թերություններ	
Չի խթանում պետական սեկտորին ձևավորելու և հետապնդելու քաղաքական նպատակներ:	Բյուջետային ցիկլի և վերջնական արդյունքների փոխկապակցման բարդություն, վերջնական արդյունքի համար պատասխանատու մարմնի որոշման բարդություն, վերջնական արդյունքի միավորի արժեքի որոշման բարդություն, վերջնական արդյունքի վրա արտաքին գործոնների ազդեցության կրճատման հնարավորությունների սահմանափակություն:

Հաշվեկշռվածության սկզբունքի հիման վրա բյուջետային ծախսերի պլանավորման մոդելը մի շարք մասնագետների կարծիքով հանդիսանում է բյուջետավորման առավել արդյունավետ մոտեցումներից մեկը, որը ձևավորվել է բյուջետային ծախսերի ավելացման խնդրի լուծման բյուջետավորման վերը թվարկված մոդելների հնարավորությունների բացակայության պատճառով:

Բյուջետավորման դիտարկված տարբերակներից ՀՀ-ում ձևավորված տնտեսական հարաբերությունների պայմաններում թերևս առավել նպատակահարմար է ներկայանում ծրագրային բյուջետավորման մոդելը, որի ներդրման առանձնահատկություններին է նվիրված աշխատանքի հաջորդ

⁴ Клименко А. Реформы федерального бюджета в США. Экономика. N 4. 2002, стр. 59-61.

⁵ Alesina, A. Perotti R., Fiscal Discipline and the Budget Process. 1996. Vol 86, No. 2, p. 401-407.

բաժինը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ծրագրային բյուջետավորման և բյուջետային ծախսերի գնահատման մեխանիզմները ԶԶ-ում», գլխում բացահայտվել են հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի զարգացման նախադրյալները, վերլուծվել են բյուջետային ծախսերի պլանավորման սկզբունքները և գնահատվել են դրանց գործնական կիրառության հնարավորությունները, ինչպես նաև ծրագրային բյուջետավորման և բյուջետային ծախսերի կառավարման մոտեցումները:

Բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման նախադրյալներից մեկը միջնաժամկետ ֆինանսական պլանավորման գործունե մեխանիզմի ներդրումն է: Ընդհանուր առմամբ, երկարաժամկետ պլանավորման հիման վրա բյուջեների ձևավորման հարցը գործնականում քննարկման ենթակա չէ: Միջինաժամկետ ֆինանսական պլանավորման համար խիստ կարևոր է նաև «լողացող» բյուջետային պլանավորման մեխանիզմի ներդրումը և զարգացումը: Բյուջետային ծախսերի, հատկապես կապիտալ հատկացումների առումով կարող են լինել նախագծեր, որոնց իրականացման ժամկետը դուրս է գալիս մեկ տարվա շրջանակից և կրում երկարաժամկետ բնույթ: Նման դեպքում որոշ երկրներում հաջորդ տարիների բյուջեների համար այդպիսի նախագծերը դիտվում են որպես փաստացի կամ պոտենցիալ բյուջետային միջոցառումներ, իսկ որոշ երկրներում՝ դրանք կրում են զուտ ինդիկատիվ բնույթ:

ԶԶ-ում հարկաբյուջետային կայունության ապահովման հիմնական սպառնալիքներից մեկը հանդիսանում է հասարակության տարբեր խմբերի և քաղաքական որոշ ուժերի ճնշումը պետական ծախսերի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ առանց տնտեսական հետևանքները հաշվի առնելու:

Պետական ծախսերի կառավարման արդյունավետության ապահովման համար առաջին հերթին անհրաժեշտ է ոչ միայն բյուջետային հարաբերությունների պատշաճ կանոնակարգվածություն և փաստաթղթաշրջանառության հստակություն, այլև հարկաբյուջետային ցուցանիշների կանխատեսման իրատեսականության և պետական ծախսերի հիմնավորվածության աստիճանի հնարավոր բարձր մակարդակ: Բյուջետային ծախսերը պետք է ուղղված լինեն պետության ռազմավարական գերակայությունների և երկարաժամկետ զարգացման նպատակների իրացմանը: Այլ կերպ ասած, պետական ծախսերը պետք է համահունչ լինեն տնտեսական քաղաքականության գերակայություններին, իսկ այդ ծախսերի կառավարման համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները:

Արդյունքների վրա հիմնված բյուջետավորման միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն արագ տարածում է գտնում ողջ աշխարհում: Ավելին, զարգացած երկրների մեծ մասը բյուջետային հարաբերությունների համակարգում օգտագործում է արդյունքների վրա հիմնված

բյուջետավորումը: Այն գործնական կիրառություն է ստացել այնպիսի անցումային երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Մերձբալթյան պետությունները, Մակեդոնիան, Սլովենիան, Ղազախստանը, Հայաստանը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման մեխանիզմի ներդրումը բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր միջոց կարող է դառնալ: Այդ առումով արդեն իսկ նկատվում են որոշակի նախադրյալներ:

Ուսումնասիրելով բյուջետային ծախսերի պլանավորման սկզբունքները և գնահատելով դրանց գործնական կիրառության հնարավորությունները հանրապետությունում՝ կարելի է պնդել, որ բյուջետային գործընթացի արդյունավետությունն ապահովող հաջորդ նախադրյալը հանդիսանում է ծախսային հոդվածների կայունությունը: Այն ցույց է տալիս, թե որքանով են ընտրված գերակայությունները երկարաժամկետ բնույթ կրում: Սովորաբար, բյուջետային հստակ գերակայությունների պայմաններում բյուջետային քաղաքականությունն առավել կայուն բնույթ է կրում և ուղղված է դրանց իրականացման ապահովմանը:

Ծրագրային բյուջետավորման կառուցվածքը կարելի է ներկայացնել որպես պետական բյուջեի և պետության կողմից մշակված ռազմավարության փոխազդեցություն: Ուստի, այն միջոց է և գործիք, որն օգտագործվում է պետական ֆինանսների կառավարման համակարգում և պատասխանում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են ֆինանսավորվող նախագծերի, դրանց ֆինանանսավորման մակարդակների, ինչպես նաև վերջնական արդյունքների մասին հարցերը:

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած է բյուջետային ծախսերի հիմնավորումը, որը կատարվում է տարբեր մեթոդների միջոցով: Աշխատանքում օգտագործվում է «վարից վեր» բյուջետավորման մեթոդը, որի կարևորագույն տարրերն են՝

1. պետական ծախսերի, դրանց տնտեսական բովանդակության, ինչպես նաև այդ ծախսերի իրականացման նպատակների ու արդյունքների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը,
2. տեղեկատվության հաշվառում իրականացնելու համար ծախսային քաղաքականության վերանայման հնարավորությունը:
3. ծրագրային ծախսերի դասակարգումը և դրանց հասցեականության նպատակադրումը:

Բյուջետային ծախսերի կառուցվածքի տեսանկյունից ուշագրավ է հանրային ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և դատական համակարգի պահպանման ծախսերի ծավալը, որը, խոշոր հաշվով, ցույց է տալիս պետական կառավարման համակարգի ծախսային բեռը պետական բյուջեի վրա:

2005-2012թթ. հանրային ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության ոլորտների և դատական համակարգի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, ԵՄ-13 երկրներում⁶

(%)

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2012 ընդհանուր ծավալը, մլն եվրո
1	2	3	4	5	6	7
ԵՄ 27	9.9	9.6	9.6	9.7	10.1	119446
Բելգիա	11.9	11.2	11.3	11.4	12.2	41050
Բուլղարիա	12.0	9.0	12.6	9.0	10.9	3837
Չեխիա	9.2	7.8	7.6	7.7	8.0	10962
Դանիա	9.2	9.2	9.1	9.4	10.2	22707
Գերմանիա	8.8	8.7	8.5	8.6	9.0	214530
Էստոնիա	6.3	6.5	6.5	7.3	8.3	1157
Իռլանդիա	5.0	4.7	5.0	5.8	6.3	10070
Հունաստան	13.5	13.4	14.1	14.5	16.2	38111
Իսպանիա	7.6	7.4	7.4	7.7	8.3	88090
Ֆրանսիա	10.5	10.1	10.0	10.2	10.5	198197
Իտալիա	12.3	11.9	11.9	12.2	12.3	185748
Կիպրոս	14.5	14.4	14.5	14.1	16.2	2737
Լատվիա	7.3	8.4	8.1	7.7	7.8	1438

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի տվյալները, տվյալ ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում տարբեր երկրներում 2008-2012թթ. տատանվում է 5-12%-ի սահմաններում⁷: Ընդ որում, Եվրոմիության անդամ պետություններում 2012 թվականին արձանագրված ցուցանիշը կազմել է մոտ 10.1%, ինչը գրեթե հավասար է հանրապետությունում արձանագրված նույն ցուցանիշին: Ընդհանուր առմամբ, եվրոպական երկրներում ամենաբարձր ցուցանիշն առկա է Բելգիայում՝ 12.2%, իսկ ամենացածրը՝ Իռլանդիայում՝ 6.3%:

ՀՀ-ում պետական բյուջեի կառուցվածքը և դրա առանձին տարրերը գնահատելիս, պարզ է դառնում, որ պետական բյուջեի եկամուտների միջին աճը 2008-2012թթ. կազմել է 816.6 մլրդ դրամ, որից հարկային եկամուտների միջինը՝ 741.3 մլրդ. դրամ, իսկ պետական ծախսերի միջինը՝ 937.3 մլրդ. դրամ: 2008-2012թթ. պետական բյուջեի պակասուրդը կազմել է միջինը 120.8 մլրդ. դրամ, որը ֆինանսավորվել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին (Աղյուսակ 4) :

⁶ Նույն տեղում:

⁷ General Government expenditure trends 2005-2010: EU countries compared. Economy and finance. Author: Laurent FREYSSON. 42/2011 — Statistics in focus. Eurostat. <http://epp.eurostat.ec.europa.eu>

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, մլրդ. դրամ⁸

	2008	2009	2010	2011	2012	2013թ. բյուջետային ծրագիր
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ	785,4	690,0	780,4	880,9	946,2	1032,8
Հարկեր, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	726,1	625,3	699,4	777,4	878,4	993,1
Ավելացված արժեքի հարկ	318,3	254,2	301,7	328,5	369,7	-
Ակցիզային հարկ	45,9	42,8	48,1	39,4	49,3	-
Եկամտահարկ	53,7	60,2	73,9	81,2	91,7	-
Շահութահարկ	86,2	81,8	77,8	97,8	118,7	-
Գույքահարկ	0,0	0,0	0,0	0,0	0,0	-
Հողի հարկ	0,0	0,0	0,0	0,0	0,0	-
Մաքսատուրք	37,3	25,1	29,4	36,3	43,0	-
Հաստատագրված վճար	20,3	22,8	22,0	20,7	14,9	-
Այլ հարկային եկամուտներ	37,0	16,4	126,4	27,6	38,3	-
Պետական տուրք	22,3	19,0	20,0	22,4	23,8	-
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	105,0	102,9	105,3	123,4	129,1	-
Պաշտոնական դրամաշնորհներ	15,0	21,7	30,6	59,4	18,7	17,5
Այլ եկամուտներ	44,3	43,0	50,4	44,0	49,1	22,3
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր	810,6	929,1	954,3	986,5	1006,1	1152,6
Ընթացիկ ծախսեր	717,5	718,3	763,1	812,3	875,6	955,2
Աշխատավարձ	59,4	70,6	73,1	78,8	80,8	89,2
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	4,7	5,0	5,2	5,9	5,4	-
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	135,3	152,3	159,9	171,5	204,7	173,3
Սուբսիդիաներ	87,7	19,0	17,8	19,8	21,1	20,1
Տոկոսավճարներ	11,1	16,3	30,4	35,5	40,7	52,6
Դրամաշնորհներ	83,2	80,1	94,4	99,4	112,8	102,9
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	207,9	240,2	244,0	256,4	288,5	302,3
Այլ ծախսեր	128,2	134,9	138,3	145,1	121,6	214,9
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	93,1	210,8	191,2	174,2	130,5	197,4
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	-25,2	-239,1	-173,9	-105,7	-59,9	-119,8

⁸ <http://minfin.am/main.php?lang=1&mode=budget&year=2012&iseng=1&isarm=1>

Ատենախոսության երրորդ՝ «Ծրագրային բյուջետավորման կատարելագործման հիմնական ուղղությունները ԶԶ-ում», **գլխում** մշակվել է ծրագրային բյուջետավորման մոդել, գնահատվել է դրա դերը բյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում և ԶԶ-ում ընդհանուր տնտեսական բարեփոխումների համատեքստում հիմնավորվել են բյուջետային քաղաքականության բարելավման ուղիները:

Անցումային բարեփոխումների «առաջին» փուլի արդյունքում հանրապետության տնտեսությունում ձևավորվեց պետական կառավարման որոշակի համակարգ, որը, ընդհանուր առմամբ բավարարում էր այդ ժամանակի պահանջներին: Հետագայում բարեփոխումները սկսեցին հետապնդել ձևավորված կառավարման մոդելի կատարելագործման և տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակ: Դրանք, առաջին հերթին, պայմանավորված էին պետական ֆինանսական համակարգի կառավարմանն ուղղված այնպիսի բարեփոխումներով, ինչպիսիք են՝ միջնաժամկետ բյուջետավորումը, բյուջեի կատարման կարգապահությունը, գանձապետական համակարգի ձևավորումը և այլն: Նշված գործընթացներին զուգահեռ Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկվեցին որոշակի քայլեր նաև ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ուղղությամբ, որը դրսևորվեց հիմնականում հաշվապահական հաշվառմանը և աուդիտորական գործունեությանն ուղղված բարեփոխումներով: Այդուհանդերձ, աշխատանքները տվյալ ուղղությամբ չի կարելի համարել բավարար, քանի որ հանրապետությունում ներդրված ծրագրային բյուջետավորման համակարգը դեռևս գործում է առանց հաշվի առնելու տնտեսական հիմնական ցուցանիշների ազդեցությունը ծախսային քաղաքականության արդյունավետության վրա: Այս բացը վերացնելու նպատակով աշխատանքում տնտեսամաթեմատիկական ապարատի օգտագործմամբ մշակվել է էկոնոմետրիկ մոդել, որը թույլ է տալիս մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշների և ծախսային քաղաքականության միջև հաստատել անհրաժեշտ ֆունկցիոնալ կախվածություն:

Պետական բյուջեի հիմնական խոշոր բաժիններից՝ եկամուտների և ծախսերի վրա ազդող գործոնների բացահայտումը, ինչպես նաև դրանց դինամիկայի վերաբերյալ պատկերացումները թույլ են տալիս պետական իշխանություններին իրականացնել ավելի նպատակաուղղված սոցիալ-տնտեսական քաղաքականություն: Բյուջեի ծախսային և եկամտային ցուցանիշների միջև նախապես սահմանված կապի խզումը, որպես կանոն, հանգեցնում է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների գործունեության անկայունության: Մասնավորապես, հարկերի թերիավաքագրումը, այս կամ այն պատճառով, կարող է հանգեցնել որոշակի ծրագրերի իրականացման կասեցման ներկայում կամ ապագայում: Իսկ ծախսերի ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական ոչ ցանկալի երևույթների: Հարկային մուտքերի քանակական վերլուծությանը զուգահեռ

անհրաժեշտ է անպայման բացահայտել ու գնահատել ծախսերի վրա ազդող գործոնները: Այդ նպատակով աշխատանքում առաջարկվում է ուսումնասիրել պոտենցիալ և փաստացի ծախսերի վրա ազդող գործոնները, որոշել դրանց մակարդակները, այնուհետև վերջիններս իրար հետ համեմատելով հասկանալ, թե իշխանությունները որքանով են արդյունավետ իրականացնում իրենց քաղաքականությունը ոչ միայն եկամուտների, այլև ծախսերի ապահովման տեսանկյունից: Այդ առումով անհրաժեշտ է առաջին հերթին առանձնացնել պետական ծախսերի երկու փոխկապված ցուցանիշներ՝ փաստացի և պոտենցիալ պետական ծախսերը: Ակնհայտ է, որ փաստացի ծախսերը բավարար չափով իրականացնելու համար անհրաժեշտ են գումարներ, որոնք կարելի է ապահովել հարկային մուտքերի և արտաքին պարտքի միջոցով: Հետևաբար, փաստացի պետական ծախսերը կախված են այնպիսի կարևոր գործոններից, ինչպիսիք են հարկային եկամուտները և պետական պարտքը: Պոտենցիալ պետական ծախսերի տակ տվյալ դեպքում հասկացվում է ծախսերի այն առավելագույն մակարդակը, որը կարելի է ապահովել նշված գործոններով: Վերջիններիս և պոտենցիալ պետական ծախսերի միջև ֆունկցիոնալ կախվածությունը նկարագրելու համար քանակական վերլուծության որպես առավել համարժեք գործիք ընտրվել է էկոնոմետրիկ մոդելը,

$$G_t^* = g_0^* INC_t^{g_1^*} DEBT_t^{g_2^*} \varepsilon_t^*, \quad (1)$$

որտեղ՝

G_t^* –ն պետական ծախսերի/ՅՆԱ պոտենցիալ մակարդակն է,

INC_t –ն փաստացի հարկային եկամուտներ/ՅՆԱ մակարդակն է,

$DEBT_t$ –ն փաստացի արտաքին պետական պարտք/ՅՆԱ մակարդակն է,

g_0^*, g_1^*, g_2^* –ն մոդելի պարամետրերն են,

ε_t^* –մոդելի պատահական սխալն է,

t –ն տարվա ինդեքսն է:

Հավասարում (1)-ը լոգարիթմելուց հետո այն կունենա հետևյալ տեսքը.

$$\ln G_t^* = \ln g_0^* + g_1^* \ln INC_t + g_2^* \ln DEBT_t + \ln \varepsilon_t^* \quad (2)$$

Հարկային եկամուտների, բյուջետային ծախսերի և պետական պարտքի միջև կապն արտահայտող կոռելյացիոն մատրիցան ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 5

Մասնակի կոռելյացիաների գործակիցների մատրիցա

	INC	DEBT	G
INC	1		
DEBT	-0.29	1	
G	0.80	0.16	1

Աղյուսակ 5-ից երևում է, որ ծախսերի և եկամուտների միջև կոռելյացիոն գործակիցը կազմում է 0.8, ծախսերի և պետական պարտքի միջև կոռելյացիոն գործակիցը 0.16 է, որը բավականին բույլ է: Նման դեպքում

նպատակահարմար է օգտվել ծախսերի փաստացի և ցանկալի մեծությունների միջև գործող հետևյալ կախվածությունից⁹.

$$\ln G_t - \ln G_{t-1} = \gamma(\ln G_t^* - \ln G_{t-1}) + \vartheta_t \quad (3)$$

որտեղ՝

$\ln G_t$ –ն փաստացի պետական ծախսեր/ՅՆԱ լոգարիթմված մեծությունն է t – թղ տարում,

$\ln G_{t-1}$ –ն փաստացի պետական ծախսեր/ՅՆԱ լոգարիթմված մեծությունն է, $t - 1$ – թղ տարվա համար,

ϑ_t – ն մոդելի սխալն է t – թղ տարում,

γ –ն պարամետր է, որը ցույց է տալիսն փաստացի ծախսերը իրենց պոտենցիալ մակարդակին ձգտելու արագությունը:

Սողելը (2)- ը (3)-ի մեջ տեղադրելով կստացվի հետևյալ հավասարումը.

$$\ln G_t - \ln G_{t-1} = \gamma \ln g_0^* + \gamma g_1^* \ln INC_t + \gamma g_2^* \ln DEBT_t + \gamma \ln \varepsilon_t^* - \gamma \ln G_{t-1} + \vartheta_t \quad (4)$$

որից էլ հետևում է հետևյալ հավասարումը.

$$\ln G_t - \gamma \ln g_0^* + \gamma g_1^* \ln INC_t + \gamma g_2^* \ln DEBT_t + (1 - \gamma) \ln G_{t-1} + \gamma \ln \varepsilon_t^* + \vartheta_t \quad (5)$$

Համապատասխան նշանակումներ կատարելուց հետո կստացվի հետևյալ էկոնոմետրիկ մոդելը.

$$\ln G_t = \beta_0 + \beta_1 \ln INC_t + \beta_2 \ln DEBT_t + \beta_3 \ln G_{t-1} + \varphi_t \quad (6)$$

որտեղ՝

$$\gamma \ln g_0^* = \beta_0,$$

$$\gamma g_1^* = \beta_1,$$

$$\gamma g_2^* = \beta_2,$$

$$(1 - \gamma) = \beta_3,$$

$$\gamma \ln \varepsilon_t^* + \vartheta_t = \varphi_t:$$

Փոքրագույն քառակուսիների մեթոդով մոդել 6-ի գնահատման արդյունքները բերված են աղյուսակ 6-ում :

Աղյուսակ 6

էկոնոմետրիկ մոդելի գնահատման արդյունքները 2001-2011թթ.

Կախյալ փոփոխական: LOG(G) Գնահատման մեթոդ: Փոքրագույն քառակուսիների				
Փոփոխական	Գործ.	Ստ. Սխալ	t-վիճ.	Հավ.
LOG(INC)	2.21	0.6412	3.55	0.0094
LOG(DEBT)	0.26	0.1222	2.16	0.0677
LOG(G(-1))	-0.24	0.3774	-0.62	0.5520
C	-3.32	1.1287	-2.94	0.0217
R-քառակուսի 0.89 Ուղղված R-քառակուսի 0.85 Սխալի դիսպ.գնահատական 0.18 Ակայկի ինՖո չափանիշ -2.18 Շվարցի չափանիշ -2.03 Դարբին-Վաթ. վիճ. 2.21 F-վիճ. 19.28 Հավ(F-վիճ) 0.0009				

⁹Эрнст Брендт, Практика эконометрики: практика и современность, -М.:ЮНИТИ-ДАНА,2005, стр. 370.

Աղյուսակ 5-ում բերված մոդելի գնահատման արդյունքները կհամարվեն բավարար այն դեպքում, եթե նախորդ ժամանակահատվածի պետական ծախսերի ցուցանիշի գործակիցը լիներ նշանակալի: Տվյալ դեպքում, վերջինիս զրո լինելու հավանականությունը շատ բարձր է՝ 0.55: Մոդելը ցանկալի պահանջներին մոտեցնելու նպատակով (2)-ը անհրաժեշտ է ներկայացնել ձևափոխված տեսքով.

$$\ln G_t = \delta_0 + \delta_1 \ln INC_t + \delta_2 \ln DEBT_t + \delta_3 \ln G_{t-3} + \mu_t \quad (7)$$

որտեղ՝

$\ln G_{t-3}$ –ը փաստացի պետական ծախսեր/ՅԱԼ լոգարիթմված մեծությունն է, $t - 3$ – րդ տարվա համար,

$\delta_0, \delta_1, \delta_2, \delta_3$ –ը մոդելի որոշելի պարամետրերն են,

μ_t –ն մոդելի պատահական սխալն է t –րդ տարում:

Փոքրագույն քառակուսիների մեթոդով մոդել (7)-ի գնահատման արդյունքները բերված են աղյուսակ 7-ում.

Աղյուսակ 7

Էկոնոմետրիկ մոդելի գնահատման արդյունքները 2003-2011թթ.

Կախյալ փոփոխական: LOG(G) Գնահատման մեթոդ: Փոքրագույն քառակուսիների				
Փոփոխական	Գործ.	Ստ. Սխալ	t-վիճ.	Հավ.
LOG(INC)	1.81	0.1756	10.34	0.0001
LOG(DEBT)	0.33	0.0556	5.84	0.0021
LOG(G(-3))	-0.77	0.2655	-2.92	0.0331
C	-0.66	0.8873	-0.74	0.4902
R-քառակուսի 0.97 Ուղղված R-քառակուսի 0.94 Սխալի դիսպ.գնահատական 0.19 Ակայկի ինֆո չափանիշ -2.98 Շվարցի չափանիշ -2.90 Դարբին-Վաթ. վիճ. 2.83 F-վիճ. 46.02 Հավ(F-վիճ) 0.0004				

Ստացված արդյունքները թույլ են տալիս յուրաքանչյուր տարվա կտրվածքով հաշվարկել մոդելի կախյալ փոփոխականի գնահատված արժեքը՝ $\ln Gest_t$ –ը: Այնուհետև, 6-ում բերված էկոնոմետրիկ մոդելում $\ln G_t$ –ն փոխարինելով $\ln Gest_t$ –ով ստացվում հետևյալ մոդելը.

$$\ln Gest_t = \beta_0 + \beta_1 \ln INC_t + \beta_2 \ln DEBT_t + \beta_3 \ln Gest_{t-1} + \varphi_t \quad (8)$$

որտեղ՝

$\ln Gest_{t-1}$ –ը կախյալ փոփոխականի գնահատված արժեքն է $t - 1$ –րդ տարվա համար,

$\beta_0, \beta_1, \beta_2, \beta_3$ –ը մոդելի անհայտ պարամետրերն են,

φ_t –ն մոդելի պատահական սխալն է t –րդ տարում:

Այս դեպքում ստացված գնահատման արդյունքները բերված են աղյուսակ 5-ում:

Համեմատելով ստացված արդյունքները նախորդ և, հատկապես, առաջին գնահատման արդյունքների հետ՝ պետք է նշել, որ մոդելը էապես դարձել է նշանակալի: Մասնավորապես, բոլոր գործակիցների դեպքում էլ դրանց զրոյին մոտ լինելու հավանականությունը շատ փոքր է: Բացի այդ նշանակալիորեն մեծացել է դետերմինացիայի գործակիցը՝ 0.97: Բարելավվել են նաև Ակայկի և Շվարցի չափանիշների արժեքները՝ համապատասխանաբար -3.13 և -3.09: Սա ցույց է տալիս, մոդելը ունի անհրաժեշտ որակ և պիտանի է հետագա կիրառման համար:

Աղյուսակ 8

Էկոնոմետրիկ մոդելի գնահատման արդյունքները 2004-2011թթ.

Կախյալ փոփոխական: LOG(GEST)				
Գնահատման մեթոդ: Փոքրագույն քառակուսիների				
Փոփոխական	Գործ.	Ստ. Սխալ	t-վիճ.	Հավ.
LOG(INC)	2.68	0.4028	6.64	0.0027
LOG(DEBT)	0.39	0.0819	4.78	0.0088
LOGGEST(-				
1)	-0.57	0.2422	-2.35	0.0786
C	-3.81	0.6994	-5.44	0.0055
R-քառակուսի 0.97 Ուղղված R-քառակուսի 0.95 Սխալի դիսպ.գնահատական 0.20 Ակայկի ինֆո չափանիշ -3.13 Շվարցի չափանիշ -3.09 Դարբին-Վաթ. վիճ. 2.01 F-վիճ. 48.17 Հավ(F-վիճ) 0.0013				

Համեմատելով ստացված արդյունքները նախորդ և, հատկապես, առաջին գնահատման արդյունքների հետ՝ պետք է նշել, որ մոդելը էապես դարձել է նշանակալի: Մասնավորապես, բոլոր գործակիցների դեպքում էլ դրանց զրոյին մոտ լինելու հավանականությունը շատ փոքր է: Բացի այդ նշանակալիորեն մեծացել է դետերմինացիայի գործակիցը՝ 0.97: Բարելավվել են նաև Ակայկի և Շվարցի չափանիշների արժեքները՝ համապատասխանաբար -3.13 և -3.09: Սա ցույց է տալիս, մոդելը ունի անհրաժեշտ որակ և պիտանի է հետագա կիրառման համար:

Գնահատված մոդելը կունենա հետևյալ տեսքը.

$$\ln \widehat{Gest}_t = -3.81 + 2.68 \ln INC_t + 0.39 \ln DEBT_t - 0.57 \ln Gest_{t-1} \quad (9)$$

Այնուհետև, բանաձև (9)-ում համապատասխան տվյալների տեղադրումից հետո կստացվի էկոնոմետրիկ մոդելի անհայտ գործակիցների հետևյալ գնահատականները.

$$\begin{aligned} 1.57 \ln g_0^* &= -3.81 \\ 1.57 g_1^* &= 2.68 \\ 1.57 g_2^* &= 0.39 \\ \gamma &= 1.57 \end{aligned}$$

Այստեղից հետևում է որ.

$$\ln g_0^* = -2.43$$

$$g_1^* = 1.71$$

$$1.57g_2^* = 0.39$$

$$\gamma = 1.57$$

$\gamma = 1.57$ – ը նշանակում է, որ այս դեպքում փաստացի և պոտենցիալ շտկումը կատարվում է շատ արագ:

Այսպիսով, կատանանք հետևյալ գնահատված մոդելները.

$$\ln \overline{G}_t^* = 2.43 + 1.71 \ln INC_t + 0.25 \ln DEBT_t \quad (10)$$

$$\overline{G}_t^* = 0.09 INC_t^{1.71} DEBT_t^{0.25} \quad (11)$$

Վերջինիս թվային փորձարկման արդյունքները բերված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 9

ՀՆԱ-ի նկատմամբ փաստացի և ցանկալի ծախսերի մակարդակներն ու դրանց շեղումները¹⁰

	Պետական բյուջեյի փաստացի ծախսեր/ՀՆԱ, %	Պետական բյուջեյի պոտենցիալ ծախսեր/ՀՆԱ%	Ցանկալի և փաստացի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և դրանց տարբերությունը, %
2000	21.61	23.34	1.73
2001	20.78	21.90	1.12
2002	19.37	22.54	3.17
2003	19.26	20.55	1.29
2004	17.50	19.67	2.17
2005	18.60	18.60	-0.01
2006	18.10	18.15	0.05
2007	20.15	20.65	0.50
2008	22.72	22.84	0.12
2009	29.57	26.65	-2.93
2010	27.58	28.42	0.84
2011	26.12	28.75	2.63

Աղյուսակ 9-ից կարելի է եզրակացնել, որ պետական ծախսերի վերը նկարագրված երկու ցուցանիշների միջև տարբերությունը այնքան էլ մեծ չէ: Սակայն, մասնավորապես, 2002, 2004 և 2011 թվականների տարբերությունը առավել մեծ է եղել: Սա կարող է վկայել այն մասին, որ օրինակ 2011 թ-ին փաստացի ծախսերը պետք է 2.63%-ով ավել լինեին, սակայն ինչ-ինչ պատճառներով դա այդպես չի եղել: Այս հանգամանքն իր հերթին կարող է պայմանավորված լինել նաև տվյալ ոլորտում հնարավոր ստվերային գործունեությամբ:

Հարկային եկամուտների և արտաքին պետական պարտքի փոխազդեցության սահմանները որոշելու համար միջին ճկունության

¹⁰ www.minfin.am և մոդելի սեփական գնահատման արդյունքներ:

գործակիցները հաշվարկվել են ըստ յուրաքանչյուր գործոն-փոփոխականի.

$$\overline{\epsilon_{inc}} = 1.71 * \frac{15.42}{22.67} = 1.16$$

$$\overline{\epsilon_{debt}} = 0.25 * \frac{31.55}{22.67} = 0.35$$

Ստացված արդյունքները տնտեսագիտորեն կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1. Միջին ճկունությունը՝ ըստ հարկային մուտքերի ցույց է տալիս, որ հարկային եկամուտների աճը 1%-ով միջին հարկային մուտքերի նկատմամբ հանգեցնում է պոտենցիալ ծախսերի 1.16 %-ով աճին վերջիններիս միջին մակարդակի նկատմամբ:
2. Միջին ճկունությունը՝ ըստ պետական պարտքի ցույց է տալիս, որ պետական պարտքի աճը 1% -ով միջին պետական պարտքի նկատմամբ կհանգեցնի 0.35% -ով պոտենցիալ ծախսերի աճին վերջիններիս մակարդակի նկատմամբ:

Այսպիսով, ստացված ճկունության գործակիցները բնավ չեն ենթադրում, որ հարկային մուտքերը ավելացնելու նպատակով պետությունը պետք է իրականացնի հարկային դրույքների բարձրացում կամ նոր հարկերի սահմանում: Պարզապես նպատակահարմար է ստեղծել հարկային այնպիսի միջավայր, որը թույլ կտար ավելացնել հարկվող օբյեկտների թիվը և հատկապես զերծ մնալ այսպես կոչված, «հովանավորչական քաղաքականությունից»: Ինչ վերաբերում պետական պարտքի ցուցանիշի վերլուծությանը, ստացված արդյունքները, բավականին մտահոգիչ են: Մասնավորապես, 1% պարտքի աճը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է պետական ծախսերի միայն 0.35% աճի: Այլ կերպ ասած՝ պետական պարտքն արդյունավետ չի օգտագործվում կամ որ նույնն է ըստ նշանակության մասամբ է օգտագործվում: Փաստորեն, այս գործոններով է հիմնականում պայմանավորված ծախսերի ցանկալի և փաստացի մակարդակների տարբերության առաջացման պատճառները:

Հայաստանի Հանրապետությունում սկսվել է ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացը: Բնական է, որ դրա կենսագործումը կարող է վտանգվել կառավարման տարբեր մարմինների կոմից: Դա բացառելու համար բոլոր բյուջետային հաստատություններում պետք է ձևավորվել բարեփոխումները լիակատար կերպով անցկացնելու անհրաժեշտ կարևորագույն տարրերը, այդ թվում՝ բյուջետային պլանավորման միասնական մեթոդաբանությունը, մոնիտորինգի և հաշվետվողականության գործուն մեխանիզմների, ինչպես նաև բյուջետային նոր տեխնոլոգիաների կիրարկման համար բարենպաստ համակարգը:

Ատենախոսության «**եզրակացություններ**» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք հակիրճ ներակայացվում են ստորև.

1. Հասարակության զարգացմանը զուգընթաց փոխվում է նաև պետական բյուջեի սոցիալ-տնտեսական դերը: Վարչահրամայական տնտեսության պայ-

մաններում այն հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերի ֆինանսական ապահովվածության միակ աղբյուրն է: Շուկայական հարաբերությունների պայմաններում փոխվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի միջև հարաբերակցությունը՝ ի օգուտ վերջիններիս: Նման պարագայում բյուջետային միջոցներն առավելապես ուղղվում են համապետական բնույթի խնդիրների լուծմանը, կառուցվածքային վերափոխումների իրականացմանը, գիտատեխնիկական առաջընթացի զարգացմանը:

2. Բյուջետավորման արդյունավետ մոդելներից մեկը ծրագրային բյուջետավորումն է, որի կիրառման դեպքում հիմնական շեշտադրումը կատարվում է այլընտրանքային ծրագրերի տնտեսական վերլուծության և բյուջետային ծախսերի տնտեսական հետևանքների գնահատման վրա:

3. Ծրագրանպատակային բյուջետավորման համակարգի ներդրումը իր մեջ ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին գերատեսչությունների, նախարարությունների և բյուջետային ֆինանսավորում ստացող այլ մարմինների ծախսերի պլանավորումը: Ընդ որում, տարբեր երկրներում և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են բյուջետային գործընթացի մասնակիցներին վերապահվող իրավասություններով:

4. Ծրագրային բյուջետավորման ժամանակ ծախսերի պլանավորման ելակետային օղակն է դառնում ոչ թե բյուջետային ֆինանսավորում ստացող մարմինները և գերատեսչությունները, այլ նպատակային ծրագրերը: Տվյալ դեպքում, իշխանության համապատասխան մարմինների դերակատարությունը կայանում է ընդամենը այդ ծրագրերի իրականացման գործընթացին մասնակից լինելու մեջ:

5. Ծրագրային բյուջետավորումը հիմնականում կողմնորոշված է ընդհանուր հասարակական նպատակների ձեռք բերմանը: Դրա կարևորագույն բնութագրիչը ֆինանսական պլանավորման կենտրոնացվածության ուժեղացումն է, ինչով էլ պայմանավորված է պետական ֆինանսական համակարգի կառավարման բարեփոխումների առաջնահերթությունը: Վերջիններիս հաջողությունը ենթադրում է կառավարման տվյալ համակարգի ձևավորման և հարկաբյուջետային լծակների նպատակամետ օգտագործման արդյունավետ մեխանիզմներ:

6. Ծրագրային բյուջետավորման համակարգի գործունեության թափանցիկության ապահովումը սկսվում է ըստ կատարողների ծրագրային միջոցառումների իրականացման ձևաչափի ժամանակային և ծավալային ցուցանիշների գնահատմամբ: Բյուջետավորման տվյալ տարբերակի դեպքում նպատակահարմար է կիրառել «ոսկե միջինի» կանոնը, համաձայն որի առավել ճկուն և կառավարելի համակարգ կարելի է ունենալ միայն արդյունավետ պետական վերահսկողության դեպքում: Այլ խոսքով՝ պարզ և վերահսկելի ռեսուրսների կառավարման համակարգը ենթադրում է ապակենտրոնացված կառավարման մոդել, որի միջոցով հնարավոր է կայացնել առավել արդյունավետ որոշումներ:

7. Ծրագրային բյուջետավորման ներդրման հիմնական նպատակը

պետական ֆինանսական համակարգի արդյունավետության բարձրացումն է: Այն իրենից ներկայացնում է պետական բյուջեի կազմման գործընթաց, որն ուղղված է նպատակային ծրագրերի ֆինանսավորումից մինչև պետական ծախսերի հասցեականության ապահովում: Ծրագրային բյուջետավորումը հանդես է գալիս որպես ծախսեր-եկամուտներ վերլուծության արդյունքում պետական ֆինանսների հասցեական վերաբաշխման գործընթաց՝ հանրային ծառայությունների բնագավառում դրանց արդյունավետությունը բարձրացնելու և կառավարչական որոշումներ ընդունելու գործընթացը պարզեցնելու համար: Այն շատ հաճախ պայմանավորված է պետական ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներով, ինչպիսիք են՝ միջնաժամկետ բյուջետավորումը, բյուջեի կատարման կարգապահությունը, գանձապետական համակարգի կենտրոնացումը: Նշված նվաճումների հետ զուգահեռ հանրապետությունում բավականին դանդաղ առաջընթաց է գրանցվում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ուղղությամբ, որը պայմանավորված է նաև հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բարեփոխումներով: Ինչևիցե, կարևորն այն է, որ գրեթե բոլոր բյուջետային հաստատություններում ձևավորվել են բարեփոխումները լիակատար կերպով ավարտելու համար անհրաժեշտ կարևորագույն տարրերը, բյուջեի պլանավորման մեթոդաբանությունը, ձևաչափը, մոնիտորինգի և հաշվետվողականության հիմքերը, ինչպես նաև բյուջետային նոր տեխնոլոգիաների կիրարկման համար բարենպաստ բյուջեի իրականացման համակարգը: Եվ որ ավելի կարևոր է, նոր գաղափարները և գործիքները հաջողությամբ փորձարկվել են բազմաթիվ պետական մարմիններում:

8. ՀՀ-ում հարկերի թերիավաքագրումը կարող է հանգեցնել որոշակի ծրագրերի իրականացման կասեցմանը: Իսկ բյուջետային ծախսերի ոչ պատշաճ իրականացումը նպաստում է անցանկալի սոցիալ-տնտեսական երևույթների առաջացմանը: Ուստի, հարկային մուտքերի մոդելավորումից բացի հրատապ խնդիր է պետական ծախսերի վրա ազդող գործոնների վերլուծությունը և գնահատումը: Այդ հիմքով, առաջարկվել է ուսումնասիրել պոտենցիալ և փաստացի պետական ծախսերի վրա ազդող գործոնները և որոշել պոտենցիալ ծախսերի չափը, այնուհետև՝ այն համեմատել փաստացի ծախսերի հետ՝ հասկանալու համար, թե պետական մարմինները որքանով են արդյունավետ իրականացնում իրենց քաղաքականությունը ոչ միայն եկամուտների, այլև ծախսերի ապահովման տեսանկյունից:

9. Ծրագրային բյուջետավորման հիմնական հատկանիշներից է բյուջետային գումարների դիմաց մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկության և հաշվետվականության կարևորումը, որի դեպքում պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշները նույնքան կարևոր են համարվում, որքան և ֆինանսականը: Սա նշանակում է, որ պետական մարմինների ղեկավար պաշտոնյաները հաշվետու են բյուջետային ռեսուրսների օգտագործման համար՝ ոչ միայն ֆինանսական արդյունքների մասով, այլև

տվյալ պետական մարմնի կողմից մատուցվող կամ գնվող ծառայությունների և ոչ ֆինանսական արդյունքների համար՝ դրանց պլանավորման, հաշվետվության և մոնիտորինգի միջոցով: Միևնույն ժամանակ ոչ ֆինանսական արդյունքների մասին տեղեկատվությունը հաշվի է առնվում բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ: Շնորհիվ վերոնշյալ հատկանիշների՝ ծրագրային բյուջետավորումը պետական մարմինների ղեկավարներին տալիս է գործուն լծակներ՝ օգնելով, որ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ծրագրեր իրականացնող կազմակերպությունները և պետական մարմնի ղեկավար պաշտոնյաները հաշվետու լինեն մատուցված ծառայությունների և իրենց գործունեության արդյունքների համար: Արդյունքների մասին բարելավված տեղեկատվությունը նպաստում է պետական մարմնի կողմից առաջարկվող ծախսային ծրագրերի և կառավարության ընդհանուր նպատակների միջև կապի թափանցիկությանը, որն իր հերթին օգնում է պետական մարմիններին ներկայացնել ֆինանսավորման ավելի հիմնավորված հայտեր միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման և բյուջետային գործընթացներում: Հաշվետվականության ճկուն մեխանիզմների առկայությունը հնարավոր է դարձնում պետական մարմիններին ռեսուրսների կառավարման հարցում ճկունության ընձեռումը՝ ծրագրերի կառավարման արդյունավետությունն ապահովելու նպատակով, որը այժմ կիրառվում է զարգացած երկրներում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Բաղդասարյան Ա.Յու., «Բյուջետային համակարգերի զարգացման և բուջետավորման նոր մոտեցումների հարցերի շուրջ»: ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2011թ. էջ 39-44:
2. Բաղդասարյան Ա. Յու., «Բյուջետային գործընթացի ծրագրային ապահովածության առանձնահատկությունները»: «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»: Հանրապետական գիտաժողովի նյութեր – գիրք 1, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 26-29:
3. Բաղդասարյան Ա.Յու., «Ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրները և և դրանց լուծման ուղիները»: «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» ժողովածու: Հանրապետական գիտաժողովի նյութեր – գիրք 1, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2012թ. էջ 29-32:
4. Բաղդասարյան Ա.Յու., Բաղդասարյան Բ.Յու., «Ծրագրային բյուջետավորման մոդելի ներդրման հարցի շուրջ»: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում հանրապետական գիտաժողովի նյութեր-գիրք 2, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 29-33

БАГДАСАРЯН АРМЕН ЮРИЕВИЧ

ПРОБЛЕМЫ ПРОГРАММНОГО БЮДЖЕТИРОВАНИЯ В РА.

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 “Финансы, денежное обращение и кредит”. Защита диссертации состоится на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА при экономическом факультете ЕГУ 16-ого июля 2013 года в 13:30 часов по адресу: г. Ереван 0009, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам программного бюджетирования в РА.

Объектом исследования является деятельность бюджетного процесса, а также результаты реформ, которые необходимы применять в РА

Предметом исследования является выявление новых подходов к переоценке проблем, программы бюджета, государственной политики и структуры государственных расходов.

Следовательно, исходя из потребности регулирования этой проблемы, основной целью работы является исследование деятельности программного бюджетирования и разработки новых подходов к решению проблем и механизмов, регулирования структуры государственных расходов, которые способствуют росту эффективности бюджетного процесса в РА.

Исходя из указанной цели, в работе дается решены следующие задачи:

- изучить сущность программного бюджетирования, специфики зарубежного и местного опыта по данной теме,
- исследовать основную роль системы государственного бюджетирования, а также рассмотреть программное бюджетирование и структуру государственных расходов,
- анализировать те факторы, которые влияют на развитие программного бюджетирования,
- оценить процесс планирование затрат на основе зарубежного опыта и предложить модель программного бюджетирования для практического применения в РА,
- рассмотреть подходы управления бюджетными расходами ,

- определить пути совершенствовании бюджетной политики,
- разработать и предложить модель программного бюджетирования и оценить те возможности, которые влияют на формирование эффективной экономической и бюджетной политики.

Научная новизна данного исследования состоит в следующем:

- с точки зрения повышения эффективности экономической политики подвергнуты всестороннему анализу подходы к программному бюджетированию, на основе исследования мирового опыта бюджетной политики выявлены их преимущества и рассмотрены возможности применения этих подходов в Республике Армения;

- на основе количественного и качественного анализа основных макроэкономических показателей - налоговой нагрузки, государственного долга, государственных расходов, влияющих на бюджетный процесс, в контексте реформ разных поколений предложен механизм его практического применения путем экономической оценки реформ в бюджетной системе и реализации принципов программного бюджетирования;

- разработана эконометрическая модель, отражающая корреляционную зависимость между основными макроэкономическими показателями и временными рядами с целью внедрения в Республике Армения программного бюджетирования и, тем самым, совершенствования бюджетного процесса и повышения эффективности расходной политики.

В результате исследований и анализа предложены практические и теоретических и практические новые подходы для повышения степени внедрения программного бюджетирования в РА

BAGHDASARYAN ARMEN YURI

Program Budgeting Issues in the Republic of Armenia

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 “ Finance, Cash Flow and Credit”. The defense of thesis will take place on July 16, 2013 at 13³⁰ o'clock, at 015 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan St., Yerevan, 0009, Armenia.

Abstract

The topic of the dissertation thesis is program budgeting issues in the Republic of Armenia. The object of the research is the budgeting process in the Republic of Armenia taking into account the urgency the reforms being implemented in this area; and the subject of the research is the identification of the program budgeting issues in the context of adoption of this system, and review and assessment of the public expenditure policy.

The goal and the objectives of the Research: the main objectives of the dissertation thesis, in the process of the transition to market economy, are new mechanisms and approaches to the issues on the adoption and improvement of the program budgeting, programmatic objectives, and analysis of regulating the size and the structure of the public expenditure; the design of the respective methodology in compliance with the international standards to receive the required data; and in order to increase the efficiency of the public spending to apply programmatic objectives. To meet the above-stated objectives the following issues were addressed in the dissertation thesis:

- to study the best practices of the program budgeting worldwide and the peculiarities of the development of that system in Armenia;
- to justify the role of the budget system in regulating the economy by the state; and investigate the necessity of reviewing the program budgeting and spending policy;
- to analyze the preconditions for the development of the program budgeting system in the Republic of Armenia;
- to analyze the best practices of systematic costs formulation principles worldwide and identify their possible practical implications in the Republic of Armenia;

- to assess the possible approaches to the adoption of the program budgeting and control of programmatic objectives;
- identify the possible directions aimed at improving the budget policy in Armenia;
- to design a model of the program budgeting and assess the possibility of adopting this model in the Republic of Armenia within the simplification process of assessing the efficiency of the budget policy;
- to design methods and approaches to assess the efficiency of economic reforms in the budget system and to propose mechanisms to improve these reforms.

Justifies the need for structural changes in the budget process in the Republic of Armenia, as well as analyzes the incentives to improve the efficiency of public policies, as well as by studying the experience of different countries We improve the scope of the introduction of new ways of budgeting software to ensure optimal interconnection between budget and public expenditure in the Republic of Armenia.

The main results and the scientific novelty of the dissertation thesis: The research results have mainly practical implications, and the novelties of the results are as followings:

1. From the point of view of increasing the effectiveness of economic policy subject comprehensive analysis of the approaches to program budgeting on the basis of the study of international experience of fiscal policy identified their strengths and examined the applicability of these approaches in the Republic of Armenia;
2. On the basis of quantitative and qualitative analysis of key macroeconomic indicators - the tax burden, government debt, government spending, affecting the budget process in the context of the reforms proposed by the different generations the mechanism of its practical application through economic reform evaluation in the budget system and the implementation of the principles of program budgeting;
3. Developed an econometric model that reflects the dependence of the correlation between key macroeconomic indicators and time series with a view to implementation in the Republic of Armenia of program budgeting, and thus, improving the budget process and effectiveness of expenditure policy.

As a result of research and analysis of the proposed practical and theoretical and practical new approaches for increasing the implementation of program budgeting in RA

